ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» նոյեմբերի 2025 թվականի N: 676-Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 648-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, 34-րդ հոդվածի 1-3 մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Պեմզաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2025 թվականի հոկտեմբերի 01-ի N 2 նիստի արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2025 թվականի նոյեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Տուֆաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լեռնակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայրենյացի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Պեմզաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միասնական խորհրդի անվանական կազմը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 25-ի N 404-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի ապրիլի 1-ի N 174-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի հունվարի 24-ի N 23-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 648-Ա որոշման հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետում «Սաֆարյան» բառը փոխարինել «Ավագյան» բառով:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է